*ՆԱԽԱԳԻԾ*

## *ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ*

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

«___» ______________ 2015 թ. N _____-Ն

ք.Ստեփանակերտ

### *ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԽՈԶԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՁԵՌՔԲԵՐՎԵԼԻՔ ԽՈԶԱՄԵՐՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿԵՐԻ ԱՐԺԵՔԻ ՓՈԽԱՌՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հաստատել Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում խոզաբուծության զարգացման նպատակով ձեռքբերվելիք խոզամերունների և կերի արժեքի (այսուհետ՝ գույք) փոխառությամբ տրամադրման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությանը՝ գույքի փոխառությամբ տրամադրման գործընթացն ավարտվելուց հետո, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն ներկայացնել հաշվետվություն՝ կատարած աշխատանքների և իրականացրած միջոցառումների մասին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

*ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ*
*ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ* *Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*

Հավելված
Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության կառավարության

2015 թվականի _________________-ի
N ______-Ն որոշման

# ԿԱՐԳ

## ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԽՈԶԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՁԵՌՔԲԵՐՎԵԼԻՔ ԽՈԶԱՄԵՐՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿԵՐԻ ԱՐԺԵՔԻ ՓՈԽԱՌՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կանոնակարգվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում խոզաբուծության զարգացման նպատակով ձեռքբերվելիք խոզամերունների և կերի արժեքի (այսուհետ՝ գույք) փոխառությամբ տրամադրմանն ուղղված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) իրականացման հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգի իմաստով օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

1) ***դրամաշնորհ***՝ խոզաբուծության զարգացմանը խթանման նպատակով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության կողմից հայտատուներին անհատույց և անվերադարձ տրամադրվող դրամական հատկացում.

2) ***գործարար ծրագիր***՝ խոզաբուծությամբ զբաղվելու գործունեությունը ըստ տարիների ներկայացնող ծրագիր.

3) ***գույքի փոխառությամբ տրամադրում***՝ տարեկան 6 տոկոսանոց փոխառության տրամադրում առանց գրավի առարկայի, առավելագույնը հինգ տարի ժամկետով.

4) ***խոզամերուն***՝ խոզի էգ առանձնյակ՝ վերարտադրության համար պիտանի.

5) ***կեր***՝ բուսական և կենդանական, ինչպես նաև հանքային ծագումով արտադրանքներ, որոնք օգտագործվում են գյուղատնտեսական կենդանիների կերակրման համար.

6) ***հայտատու***՝ խոզաբուծությամբ զբաղվելու և փոխառություն ստանալու նպատակով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն (այսուհետ՝ նախարարություն) դիմած ֆիզիկական և իրավաբանական անձինք, անհատ ձեռնարկատերերը:

## II. ԳՈՒՅՔԻ ՓՈԽԱՌՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ (ԱՅՍՈՒՀԵՏ՝ ԳՈՐԾԸՆԹԱՑ) ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

3. Միջոցառման իրականացման գործընթացում ներգրավված պետական կառավարման մարմինները իրականացնում են հետևյալ միջոցառումները՝

1) նախարարությունը համակարգում և վերահսկողություն է իրականացնում գործընթացի նկատմամբ.

2) հայտատուները նախարարության կողմից սահմանված ժամկետում նախարարություն են ներկայացնում հայտ՝ համաձայն հավելվածի, գործարար-ծրագրեր՝ նշելով խոզաբուծությամբ զբաղվելու հնարավորությունների, պայմանների ու խոզամերունների և կերի պահանջարկի մասին տեղեկությունները.

3) նախարարությունը հայտերի ներկայացման վերջնաժամկետից հետո տասնօրյա ժամկետում ստուգում է ներկայացված փաստաթղթերի

հավաստիությունը, ընդհանրացնում և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամ (այսուհետ՝ հիմնադրամ) է ներկայացնում դրական եզրակացություն ստացած հայտատուների ցանկն ու նրանց գործարար-ծրագրերը:

4. Գույքը փոխառությամբ տրամադրվում է միայն այն հայտատուներին, որոնք կապահովեն սույն կարգի 9-րդ կետի պահանջները:

5. Հիմնադրամը՝ նախարարության կողմից ներկայացված եզրակացությունների հիման վրա ապահովում է գույքի փոխառությամբ տրամադրման գործընթացի իրականացումը:

6. Հիմնադրամը գործընթացն ավարտելուց հետո, նախարարություն տեղեկություններ է ներկայացնում գործընթացի իրականացման արդյունքների մասին:

7. Նախարարությունը գործընթացի ֆինանսավորումը իրականացնում է պետական բյուջեում նախատեսված համապատասխան միջոցների հաշվին:

8. Նախարարության կողմից պարբերաբար ուսումնասիրությունների արդյունքում ի հայտ եկած՝ փոխառության գումարը վաղաժամկետ մարած, փոխառության պարտավորությունները բարեխիղճ իրականացնող և բարձր արտադրողականություն ապահովող հայտատուները Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության կողմից կարժանանան դրամաշնորհի:

## III.ԽՈԶԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅՏԱՏՈՒՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՌԻՍԿԱՅՆՈՒԹՅՈՒՆՆ ՆՎԱԶԵՑՆՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

9. Խոզաբուծության զարգացման նպատակով հայտատուների կողմից ռիսկայնությունը նվազեցնող պահանջներն են՝

1) անասնաշենքի մեկուսացում ցանկապատով, պատով և այլ պաշտպանիչ շերտով.

2) սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային միջոցառումների իրականացման համար նպաստավոր պայմանների ստեղծում, մասնավորապես՝

ա. պետական պլանային հակահամաճարակային միջոցառումների խստիվ իրականացում,

բ. ախտահանիչ պատնեշի պատրաստում,

գ. մշտական ջրով ապահովում,

դ. պատուհանների ցանցապատում.

3) կերակրման, խնամքի և պահվածքի հատուկ պայմանների ապահովում, մասնավորապես՝

ա. խոհանոցային մնացորդներով կերակրելուց խուսափում,

բ. փակ պահվածքի ապահովում,

գ. ջերմային, լուսային և օդափոխանակության ռեժիմների պահպանում:

*ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ*
*ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ*
*ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ* *Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ*

*Հավելված*
*Լեռնային Ղարաբաղի*
*Հանրապետությունում*
*խոզաբուծության զարգացման նպատակով*
*ձեռքբերվելիք խոզամերունների*
*և կերի արժեքի փոխառության տրամադրման կարգի*

# *ՀԱՅՏ*

Դիմող

___________________________________________________________________________
(ֆիզիկական կամ իրավաբանական անձ)

___________________________________________________________________________

Բնակության վայրը (գտնվելու վայրը), հեռախոսահամարը

_________________________________________________________________

Անձնագրի և սոցիալական քարտի համարը

_______________________________________________

Գործունեության իրականացման վայրը

_______________________________________________

Հայտին կից ներկայացվում են՝

1.__________________________________________________________________________________

2.__________________________________________________________________________________

3.__________________________________________________________________________________

4.__________________________________________________________________________________

5.__________________________________________________________________________________

6.__________________________________________________________________________________

| | |
|---|---|
| _______________________ | _________________________ |
| (անուն, ազգանուն) | (ստորագրությունը) |

«____» ______________ 20___ թ.

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
## «ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԽՈԶԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՁԵՌՔԲԵՐՎԵԼԻՔ ԽՈԶԱՄԵՐՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿԵՐԻ ԱՐԺԵՔԻ ՓՈԽԱՌՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ

***Անհրաժեշտությունը***

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում խոզաբուծության զարգացման նպատակով ձեռքբերվելիք խոզամերուների և կերի արժեքի փոխառությամբ տրամադրման կարգը հաստատելու մասին» որոշման նախագծի ներկայացումը պայմանավորված է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության համախառն արտադրանքում անասնաբուծության ճյուղի տեսակարար կշռի ավելացման անհրաժեշտությամբ, ինչպես նաև անասնագլխաքանակի ավելացման, բարելավման ու մթերատվության բարձրացման կարևորությամբ:

***Ընթացիկ իրավիճակը և խնդիրները***

Որոշման նախագծի խնդիրներն են՝ խոզաբուծության զարգացման համար հնարավորությունների ստեղծում, փոխառությամբ խոզամերուների ձեռքբերման միջոցով մայրական կազմի ձևավորում և համախառն արտադրանքում անասնաբուծական մթերքների ծավալների ավելացում:

***Նպատակը և բնույթը***

Ներկայացված նախագծով առաջարկվում է աջակցել Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում խոզաբուծությամբ զբաղվելու ցանկություն և հնարավորություն ունեցող ֆիզիկական և իրավաբանական անձանց փոխառության եղանակով ձեռք բերել խոզամերուներ և կեր:

***Ակնկալվող արդյունքը***

Նախագծի ընդունումից ակնկալվում է կենդանիների մթերատվության մակարդակի բարձրացում, բարձր մթերատու հատկանիշներով օժտված տնտեսությունների ցանցի ձևավորում, նոր աշխատատեղերի ստեղծում և անասնաբուծական մթերքների ինքնարժեքի մակարդակի բարձրացում:

***Նախագծի մշակման գործընթացում ներգրավված անձինք***

Նախագիծը մշակվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի

անասնաբուծության և անասնաբուժության վարչության և իրավաբանական բաժնի կողմից:

***<u>Այլ տեղեկություններ</u>***

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում խոզաբուծության զարգացման նպատակով ձեռքբերվելիք խոզամերունների և կերի արժեքի փոխառությամբ տրամադրման կարգը հաստատելու մասին» որոշման նախագիծը սահմանված կարգով դրվել է հանրային քննարկման Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության պաշտոնական կայքէջում: Սահմանված ժամկետներում առաջարկություններ կամ դիտողություններ չեն ստացվել:

*ԼՂՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ*
*ՆԱԽԱՐԱՐ* *Ա. ՄԽՈՅԱՆ*

### *ՏԵՂԵԿԱՆՔ*
### *«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԽՈԶԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՁԵՌՔԲԵՐՎԵԼԻՔ ԽՈԶԱՄԵՐՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿԵՐԻ ԱՐԺԵՔԻ ՓՈԽԱՌՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՆԵՐՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԷԱԿԱՆ ԱՎԵԼԱՑՈՒՄՆԵՐԻ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ*

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում խոզաբուծության զարգացման նպատակով ձեռքբերվելիք խոզամերունների և կերի արժեքի փոխառությամբ տրամադրման կարգը հաստատելու մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում ծախսերի և եկամուտների ավելացումներ կամ նվազեցումներ չեն նախատեսվում:

### *ՏԵՂԵԿԱՆՔ*
### *«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԽՈԶԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՁԵՌՔԲԵՐՎԵԼԻՔ ԽՈԶԱՄԵՐՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿԵՐԻ ԱՐԺԵՔԻ ՓՈԽԱՌՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ*

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում խոզաբուծության զարգացման նպատակով ձեռքբերվելիք խոզամերունների և կերի արժեքի փոխառությամբ տրամադրման կարգը հաստատելու մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

*ԼՂՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ*
*ՆԱԽԱՐԱՐ* *Ա. ՄԽՈՅԱՆ*

## *ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ*
## *«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԽՈԶԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՁԵՌՔԲԵՐՎԵԼԻՔ ԽՈԶԱՄԵՐՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿԵՐԻ ԱՐԺԵՔԻ ՓՈԽԱՌՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ*

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում խոզաբուծության զարգացման նպատակով ձեռքբերվելիք խոզամերունների և կերի արժեքի փոխառությամբ տրամադրման կարգը հաստատելու մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չկան:

*ԼՂՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ*
*ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ*

*Որոշման նախագծի անվանումը՝*
«Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում խոզաբուծության զարգացման նպատակով ձեռքբերվելիք խոզամերունների և կերի արժեքի փոխառությամբ տրամադրման կարգը հաստատելու մասին»

***Նախագիծը ներկայացնողը՝***

ԼՂՀ գյուղատնտեսության նախարարություն

*ԼՂՀ կառավարության և ԼՂՀ վարչապետի որոշումներն ուղարկել՝*

1. ԼՂՀ գյուղատնտեսության նախարարություն
2. ԼՂՀ արդարադատության նախարարություն
3. ԼՂՀ ֆինանսների նախարարություն
4. ԼՂՀ գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամ
5. ԼՂՀ շրջաններ

**Նախագիծը պատրաստողը՝**

ԼՂՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի անասնաբուծության և անասնաբուժության վարչություն, իրավաբանական բաժին

______________________ **Ն. Մուսայելյան**
(ստորագրությունը)

«______» ________________ 2015թ.